Տասներորդ հաղորդում

Տիրոջ վերականգնումը Սիոն կառուցելն է

Գրվածքների ընթերցում. Սղմ 48:2, 11-12, 20:2, 50:2, 53:6ա, 87:2, Հյտ 2:7, 11, 17, 26-28, 3:5, 12, 20-21

I. Սիոնը Դավիթ Թագավորի քաղաքն էր (Բ Թգ 5:7)՝ Երուսաղեմ քաղաքի կենտրոնը, որտեղ կառուցվեց տաճարը՝ Աստծու բնակատեղը երկրի վրա (Սղմ 9:11, 2:6, 74:2, 76:2բ, 125:1, 135:21, Եսյ 8:18).

Ա. Երուսաղեմը եկեղեցու նախատիպն է, իսկ Սիոնը՝ եկեղեցում եղող հաղթողների նախատիպը.

1. Սիոնը Երուսաղեմի ակնառու գիծն է՝ սուրբ քաղաքի գեղեցկությունը՝ Սղմ 48:2, 50:2:
2. Որպես սուրբ քաղաք Երուսաղեմի ակնառու գիծն ու գեղեցկությունը՝ Սիոնը հաղթողների՝ որպես եկեղեցու գագաթնակետի, կենտրոնի, բարձրացման, ամրապնդման, հարստացման և իրականության նախատիպն է՝ 48:2, 11-12, 20:2, 53:6ա, 87:2:
3. Սիոն բլուրը լիովին բաց է Տիրոջ համար, և Տերը լիովին տիրում է դրան՝ 24:1, 3, 7-10:

Բ. Հաղթողները՝ որպես Սիոն, Քրիստոսի Մարմնի իրականությունն են և ավարտունացնում են Մարմնի կառուցումը տեղական եկեղեցիներում, որպեսզի բերեն ավարտունացած սուրբ քաղաքը՝ Նոր Երուսաղեմը, վերջնական Սրբությունների Սրբությունը՝ որպես Աստծու բնակատեղը, հավիտենությունում՝ Հյտ 21:16, հմմտ Ելց 26:2-8, Գ Թգ 6:20:

Գ. Եկեղեցական կյանքն այսօրվա Երուսաղեմն է, և եկեղեցական կյանքի ներսում պետք է լինեն մի խումբ հաղթողներ՝ որպես այսօրվա Սիոնը՝ Հռմ 12:4-5, Եփս 4:16, Հյտ 2:7, 3:12.

1. Սա բացահայտում է, որ տեղական եկեղեցիները ոչ թե Աստծու նպատակն են, այլ միջոցը, որի օգնությամբ Աստված հասնում է Իր նպատակին. տեղական եկեղեցիները մեզ մտցնում են Քրիստոսի Մարմնի իրականության մեջ:
2. Տիրոջ վերականգնման գագաթնակետը, որը կարող է իրականացնել Աստծու տնտեսությունը, ոչ թե այն բանի համար է, որ Աստված բազմաթիվ ֆիզիկական տեղական եկեղեցիներ առաջացնի, այլ օրգանական Մարմին՝ որպես Իր օրգանիզմը՝ Ա Կրթ 12:27, Եփս 4:16:

II. Մենք պետք է գիտակցենք, թե Տիրոջ վերականգնումն ինչ է. Տիրոջ վերականգնումը Սիոնը կառուցելն է՝ Հյտ 14:1, Եփս 4:16, Հյտ 21:2, 9-10.

Ա. Երուսաղեմի առանձնահատկությունները, կյանքը, օրհնությունն ու հաստատումը բխում են Սիոնից՝ Գ Թգ 8:1, Սղմ 51:18, 102:21, 128:5, 135:21, Եսյ 41:27, Հվլ 3:17:

Բ. Հայտնության գրքում այն, ինչ Տերն ուզում է ստանալ և ինչ կառուցում է, Սիոնն է՝ հաղթողները. սա Աստծու սուրբ Խոսքում եղող հոգևոր հայտ-

նության խորքային իրականությունն է. մենք, անշուշտ, պետք է հուսակտուր լինենք՝ ամեն գնով աղոթելու և որոշակի գին վճարելու, ինչպես Պողոս առաքյալն էր դա անում՝ 2:7, 11, 17, 26-28, 3:5, 12, 20-21, Կող 4:2, Փլպ 3:8-14:

Գ. Տիրոջ՝ այս դարաշրջանում հաղթողներին ուղղված կանչի նկատմամբ մեր արձագանքը մեր կենսական դառնալն է. կենսական լինել նշանակում է կենդանի և գործուն լինել մեր կենդանի ու գործուն Աստծու հետ միասնության մեջ. երկրի վրա Աստծու շարժումը Նրա հավիտենական տնտեսության իրականացման համար ի վերջո տեղի է ունենում հաղթողների միջոցով՝ Դնլ 11:32, Եբր 3:12, 9:14, հմմտ Հյտ 3:1:

Դ. Հաղթողները, որոնց նախատիպը Սիոնն է, այն ռազմահենադաշտն են, որի շնորհիվ Տերը՝ որպես փառքի Թագավորը, վերադառնալու է և տիրելու է ամբողջ երկրին՝ որպես Իր թագավորությանը՝ Սղմ 24:1, 3, 7-10, Դնլ 2:34-35, 7:13-14, Հվլ 3:11, Հյտ 11:15, 19:13-14:

Ե. Աստծու հավիտենական տնտեսության գագաթնակետին՝ Քրիստոսի Մարմնի իրականությանը, հասնելու միակ ճանապարհն աղոթելն է. այն բանի արդյունքում, որ մենք կդառնանք հաղթողները՝ որպես Քրիստոսի Մարմնի իրականությունը՝ իբրև Քրիստոսի հարսը, այս դարաշրջանը՝ եկեղեցու դարաշրջանը, կավարտվի, և կվերադառնա Քրիստոսը՝ որպես փառքի Թագավորը, ով կզավթի երկիրը, կտիրի դրան և կիշխի երկրի վրա Իր հաղթողների հետ միասին թագավորության դարաշրջանում՝ խխ. 7-9, 20:4, 6, Սղմ 24:7-10:

Զ. Պողոսի՝ Եփեսացիներին ուղղված թուղթը բացահայտում է հաղթողների ապրելակերպը, որոնք ապրում են Քրիստոսի Մարմնի իրականության մեջ՝ ապրելով ձուլված հոգում.

1. Քրիստոսի Մարմնի իրականությունը գագաթնակետն է Աստծու տնտեսության մեջ եղող և Աստվածաշնչի բարձրագույն հայտնությունը, որը բացահայտվում է իմաստության և հայտնության հոգու միջոցով՝ 1:17, 22-23:
2. Քրիստոսի Մարմնի իրականությունը ձուլված հոգում ապրելն է, որն Աստծու բնակատեղն է, Աստծու տունը, այսօրվա Բեթելը, երկնքի դարպասն ու Սրբությունների Սրբությունը, պնևմատիկ Քրիստոսի՝ որպես Եռամեկ Աստծու մարմնավորման բնակատեղը, ում նախատիպը Տապանակն է՝ խ. 17, 2:22, 3:5, 16, 4:23, 5:18, 6:18, Ծնդ 28:12-17, Հվհ 1:51, Եբր 9:3-4, 10:19-22:
3. Քրիստոսի Մարմնի իրականությունը իրականությունն է Հիսուսի մեջ՝ Հիսուսի կյանքի փաստացի վիճակը՝ նկարագրված չորս Ավետարաններում, որը վերարտադրվում է Իր բազում անդամների մեջ՝ որպես կատարելագործված Աստվածամարդկանց ընդհանրական ապրելակերպը մտքի նորոգմամբ այն բանի միջոցով, որ նորոգող Հոգին ձուլվում է նրանց վերածնված հոգու հետ՝ Եփս 4:1-6, 15-16, 20-24, Գղտ 2:20, Փլպ 1:19-21ա, 4:11-13:

4. Եկեղեցին լցվում է գեղեցկացնող, հարսին պատրաստող Հոգով, ով միաձուլված է մեր հոգու հետ, որպեսզի դառնանք Քրիստոսի սուրբ, գեղեցիկ, Աստծուն արտահայտող հարսը՝ հարսն առանց արատի ու անկատարության՝ Եփս 5:18, 26-27, Եսյ 60:7, 19, 62:3, Ելց 28:2, հմմտ Սղմ 27:4, 48:2, 50:2, 110:2-3, 7, Եսյ 28:5, 60:21, 61:3:
5. Որպեսզի Քրիստոսը հաղթական լինի մեր ողջ էության մեջ, մենք պետք է փորձառաբար ապրենք մեր հոգու հետ միաձուլված սպանող Հոգուն, որպեսզի Աստծու հակառակորդին առնչվող ամեն ինչ սպանվի մեր ներսում, ինչը մեզ թույլ կտա Հոգու աստվածային կյանքում իշխելու Սատանայի, մեղքի և մահվան վրա Աստծու տիրակալության համար և ապրելու Մարմնի առողջ կյանքով, առողջ եկեղեցական կյանքով՝ Եփս 6:10-18, Սղմ 48:12-13:

III. Հաղթողները վայելում են Քրիստոսին՝ որպես մարմնացած Եռամեկ Աստծու՝ Աստվածամարդու, և նրանք են, ում սրտում Սիոն տանող ճանապարհներն են. «Երանելի է այն մարդը, ում զորությունը Քո մեջ է, և ում սրտի մեջ Սիոնի ճանապարհներն են: Բախա հովտով անցնելով՝ այն աղբյուրի են վերածում. և վաղ անձրևն էլ օրհնությամբ է ծածկում այն: Նրանք զորությունից զորություն են գնում. յուրաքանչյուրը Սիոնի վրա հայտնվում է Աստծու առջև»՝ 84:5-7.

Ա. Զրկանքներն ու արցունքները բերում են Աստծու տան գեղեցկությունն ու քաղցրությունը վայելելուն՝ խխ. 1, 6 և ծթգ-ներ 1[1] և 6[1], հմմտ 73:26 և ծթգ 1:

Բ. Երբ լալիս ենք, լցվում ենք Հոգով, և Հոգին մեզ համար դառնում է աղբյուր և վաղ անձրև. Սիոն տանող ճանապարհները խորհրդապատկերում են մեր՝ եկեղեցի՝ որպես Աստծու տուն, մտնելու մտադրությունը, որտեղ երկու զոհասեղաններ են, որոնք խորհրդապատկերում են մարմնացած Եռամեկ Աստծու աշխատանքի գլխավոր ավարտունությունները, այսինքն՝ Քրիստոսին՝ որպես Աստծու մարմնավորմանը, Նրա մեծացման համար՝ 84:3-6:

Գ. Սղմ 84:11-ը բացահայտում է, որ Աստծու տանը մեր բնակության օրհնությունները մեր վայելելն է մարմնացած և ավարտուն Եռամեկ Աստծուն՝ որպես մեզ կյանք մատակարարող արևի (Հվի 1:14, 8:12), որպես մեզ Աստծու թշնամուց պաշտպանող վահանի (Եփս 6:11-17), որպես մեր վայելքի համար նախատեսված շնորհքի (Հվի 1:14, 17) և որպես շքեղության մեջ Աստծու դրսևորման համար նախատեսված փառքի (Հյտ 21:11, 23):

IV. «Նրա հիմքը սուրբ լեռների վրա է: Եհովան Սիոնի դարպասները սիրում է»՝ Սղմ 87:1-2ա.

Ա. Սիոնը՝ որպես եկեղեցում հաղթողների նախատիպը, կառուցվում է «սուրբ լեռներից» ամենաբարձրի վրա, որոնք տեղական եկեղեցիների նախատիպն են, որի հիմքը Քրիստոսն է (խ. 1). երկնային Սիոնը, որի

մասին փառավոր բաներ են խոսվում (խ. 3), լինելու է հանգստի վերջնական վայրը հաղթողների համար (Հյտ 14:1):

Բ. Սիոնի դարպասները մուտքի ու ելքի համար են նախատեսված. դրանք խորհրդապատկերում են հաղորդակցությունը. այն, որ Նոր Երուսաղեմը տասներկու դարպասներ է ունենալու (21:12, 21), ցույց է տալիս, որ Աստծու սուրբ քաղաքը հաղորդակցությամբ լեցուն է լինելու:

Գ. «Բայց Սիոնի մասին ասվելու է. «Սա կամ նա նրա մեջ է ծնվել», և Բարձրյալն Ինքը հաստատելու է նրան: Եհովան ժողովուրդներին արձանագրելիս նշելու է. Սա այնտեղ է ծնվել» (Սղմ 87:5-6). սա եզակի Անձն է՝ Քրիստոսը, ով բոլոր սրբերի հանրագումարն է («սա» և «նա»). Նա բոլոր սրբերն է և բոլոր սրբերի մեջ է (Կող 3:11):

Դ. «Իմ բոլոր աղբյուրները քո մեջ են» (Սղմ 87:7). թող Եգիպտոսն իր Նեղոսով պարծենա, և թող Բաբելոնը պարծենա իր Եփրատով. նրանք աղբյուրներ չունեն, իսկ մենք Սիոնում ունենք դրանք:

V. Բարձրացման երգերը (120–134-րդ սաղմոսներ) խոսում են Սիոնի ու Երուսաղեմի թանկարժեքության մասին սրբերի փորձառության ու գովքի մեջ.

Ա. 132-րդ սաղմոսը Սիոն բարձրացող հաղթողների առնչությամբ յոթ պահ է հիշատակում. այս պահերը եկեղեցական կյանքում բարձրագույն տեղն են զբաղեցնում, և դրանք նկարագրում են հաղթողների վիճակը Սիոնի վրա՝ Աստծու լեռան գագաթին՝ խխ. 13-18.

1. Աստծու հետ հանգիստ. «Սա է Իմ հանգստի վայրը հավիտյան»՝ խ. 14ա:
2. Աստծու հետ բնակվել. «Այստեղ կբնակվեմ, քանի որ սա ցանկացա»՝ խ. 14բ:
3. Կերակուր կշտանալու համար. «Նրա պաշարն առատորեն օրհնելու եմ. նրա աղքատներին հացով կշտացնելու եմ»՝ խ. 15:
4. Փառավոր հանդերձ. «Նրա քահանաներին փրկություն եմ հագցնելու, ու նրա հավատարիմները բացականչելու են հնչեղ բացականչությամբ»՝ խ. 16, հմմտ Ելց 28:2:
5. Հաղթանակի եղջյուր. «Այնտեղ Դավթին եղջյուր եմ բուսցնելու»՝ Սղմ 132:17ա:
6. Լուսավորող ճրագ. «Ճրագ եմ պատրաստել Իմ օծյալի համար»՝ խ. 17բ:
7. Շողացող պսակ. «Նրա թշնամիներին ամոթ եմ հագցնելու, բայց նրա վրա իր պսակը շողալու է»՝ խ. 18, հմմտ Եսյ 62:3:

Բ. Երբ Սիոնը կառուցված է, ինչպես պատկերված է 132-րդ սաղմոսում, մենք ունենում ենք վայր, որտեղ կարող ենք հավաքվել և որտեղ կարող ենք մեկտեղ բնակվել միասնության մեջ. որքա՜ն լավ ու որքա՜ն հաճելի է սա՝ 133:1-3:

Գ. «Թող Եհովան, ով ստեղծեց երկինքն ու երկիրը, Սիոնից օրհնի քեզ» (134:3). որտեղ հաղթողներ կան, այնտեղ կլինի Աստծու օրհնությունը. Աստված միշտ Իր ժողովրդին օրհնում է Սիոնից՝ գագաթնակետից,

նրանցից, ովքեր հասել են գագաթին՝ հաղթողների դիրքին. այս դիրքից Աստված օրհնում է Իր ամբողջ ժողովրդին:

VI. Այսօր՝ եկեղեցու դարաշրջանում, Սիոնը՝ հաղթողները, կենսական խմբերը եկեղեցիներում, կատարելագործված ու հասունացած Աստվածամարդիկ են, բայց նոր երկնքում ու նոր երկրում ամբողջ Նոր Երուսաղեմը Սիոն կդառնա (Հյտ 21:16)՝ բոլոր հավատացյալներով՝ որպես հաղթողներով հանդերձ՝ խ. 7 և ծթգ 1:

© 2022 Living Stream Ministry